Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

27.08.2020թ. **ք.Երևան**

ՀՀ ԱՆ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն բաժին, Հարկադիր կատարող արդարադատության ավ. լեյտենանտ Արթուր Թադևոսյանս ուսումնասիրելով **«27» օգոստոս 2020թ.-ին** վերսկսված թիվ 06001261 կատարողական վարույթի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «13» մարտ 2020թ. տրված թիվ ԵԱՔԴ/2875/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Սվետլանա Գառնիկի Աղաջանյան-ից «Արֆին Վարկային միություն» ՍՊԸ-ի օգտին բռնագանձել 6342752 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսագումարներ, բռնագանձումը տարածել գրավի առարկա հանդիսացող՝ք.Երևան, Քեռու փողոց թիվ 9/1 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Բռնագանձումը տարածել 01.02.2014 թվականին գրավադրված անշարժ գույքի՝ ք.Երևան, Քեռու փողոց, թիվ 9/1 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի վրա:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ, 43-րդ հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

Աստղիկ Նորայրի Ամիրջանյանին սեփականության իրավունքով պատկանող և << Արֆին Վաիկաիին Միութոուն>> ՍՊԸ-ում գրավադրված՝ ք.Երևան, Քեռու փողոց, թիվ 9/1 բնակելի տունը

լոտի անվանում	**գնահատման գինը**	**մեկնարկային գինը**	**գույքի քանակը**
ք.Երևան, Քեռու փողոց, թիվ 9/1 բնակելի տունը	**57.600.000 ՀՀ դրամ**	**43.200.000 ՀՀ դրամ**	**1**

Ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ www.ajurd.am միջոցով:

Գույքի իրացման ընթացակարգի, մեկնարկի և մեկնարկային գնի ծանուցումն օրենքով նախատեսված դեպքերում կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքի միջոցով՝ www.azdarar.am հասցեով:

Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ «16» 10.2020թ-ին:

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարանի կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից երկամսյա ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Հարկադիր կատարող

Արդարադատության լեյտենանտ **Ա.Թադևոսյան**

Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն: Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում: Տասնհինգերորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում հարկադիր աճուրդի է ներկայացվում նաև պարտապանին պատկանող՝ օրենքով սահմանված նույն հերթում ներառված այլ գույք, իսկ նույն հերթում ներառված գույքերի անբավարարության դեպքում՝ հաջորդ հերթում ներառված այլ գույք:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ, 5–րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտն իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց հետո, իսկ գույքի /լոտի/ հանձման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում՝ նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

51